

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԴՈՒԿՏԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Այսուհետ **Դուք կարող եք ձեռք բերել** Ձեր նոր բնակարանը՝ չանհանգստանալով այլ գույքի գրավադրման կամ սպառողական վարկերի միջոցով հիփոթեքի կանխավճարի մեծությունը ծածկելու մասին՝ **կանխավճարի ապահովագրության** շնորհիվ:

ԻՆՉ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ



» Վարկատուն՝ հիփոթեքային վարկի գծով պահանջվող վկայագրով վճարման ենթակա կանխավճարի գումարը:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼ



» Ապահովագրված անձ կարող են հանդիսանալ ցանկացած **գործունակ ֆիզիկական անձինք**, ովքեր հանդիսանում են Վարկառու:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ



» 1 Տարի
» Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքմանը հաջորդող 2-րդ օրվանից

ՈՐՏԵՂ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



» Ապահովագրությամբ հատուցվում են Հայաստանում տեղի ունեցած պատահարները:

ԳՈՐԾՈՂ ՓԱԹԵԹՆԵՐԸ



» **Ազգային Հիփոթեքային** - հատուցվում է վարկի Մայր գումարի փաստացի մնացորդ
» **Բնակարան Երիտասարդներին** - հատուցվում է վարկի Մայր գումարի փաստացի մնացորդ

ՈՐՔԱՆ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎԱՆ ԳՈՒՄԱՐԸ



Երկրորդային շուկա	Շուկայական արժեքի 30% - 10% և ավելի % կանխավճար
Առաջնային շուկա	Շուկայական արժեքի 20% - 7.5% և ավելի % կանխավճար

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ



» Ապահովագրական գումարի (չվճարված կանխավճարի գումարի մնացորդի) 2%

ՎՃԱՐՄԱՆ ԻՆՉ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԿԱՆ



» միանվագ, պայմանագրի կնքման պահին,
» տարաժամկետ՝ համաձայն կողմերի առանձին պայմանավորվածության:

ՈՐՈՂՔ ԵՆ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- » Գրավադրված և կառուցման մեջ գտնվող անշարժ գույքի բացակայությունը, շինարարությունը փաստացի չավարտելու կամ ավարտական ակտ չունենալու և/կամ կառուցապատողի սնանկացման պատճառով:
- » Բանկի կրած և Կանխավճարի չվճարված գումար չհամարվող այլ ֆինանսական և/կամ Վարկի հետ կապված այլ վնասներ, կորուստներ, այդ թվում՝ հաշվարկված տոկոսագումարներ (Բացառությամբ Ազգային Հիփոթեքային Փաթեթի), Վարկի չմարման կամ ոչ պատշաճ ձևով մարման հետևանքով առաջացած տույժեր, տուգանքներ, դատական ծախսեր, Հարկադիր ծառայության ծախսեր, պարտադիր վճարներ, կոմիսիոն վճարներ կամ Վարկառուի կողմից այլ ֆինանսական պարտավորությունների կատարում կամ թերի կատարում,
- » Պետական մարմինների կարգադրությամբ Հիփոթեքի առարկայի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի կամ այլ նմանատիպ գործողությունների,
- » Հիփոթեքի առարկայի նկատմամբ Վարկառուի սեփականության իրավունքի կորստի,
- » Ապահովարի (Վարկառուի) և Շահառուի (նրա աշխատողների) միջև միտումնավոր ապօրինի համաձայնության:

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ ՓԱՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ

- » Գրավադրված Անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր կամ պատճեն,
- » Սեփականության վկայականի պատճեն,
- » Աճուրդի արձանագրության պատճեն,
- » Կատարողական թերթի, հարկադիր կատարման ծառայության համապատասխան որոշումների պատճեններ՝ կապված Անշարժ գույքի՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման հետ,
- » Բանկի որոշումները՝ կապված գույքի իրացման հետ,
- » Չվճարված կանխավճարի կամ դրա մնացորդի չափի վերաբերյալ այլ տեղեկանք,
- » Ապահովագրողի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:

Ի՞ՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՁԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ապահովադիրը/Ապահովագրված անձը պարտավոր է.

- » անհապաղ տեղեկացնել ապահովագրողին,
- » ապահովագրական հատուցման դիմումը ներկայացնել ապահովագրական պատահարից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում,
- » ապահովագրական պատահարի կարգավորման անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրել հատուցման դիմումի ներկայացնելուց հետո 60 օրվա ընթացքում:

ԻՆՉՊԵ՛Ս ԿՆՔԵԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ



- » Մոտենալ Ընկերության գրասենյակներից կամ վաճառքի կետերից մեկը,
- » Չանգահարել **010 59 21 21** հեռախոսահամարով և հրավիրել մասնագետին Ձեզ հարմար վայր,
- » Պատվիրել այն **Մեր Սոցիալական Հարթակների** միջոցով,
- » Գրել Մեր Կայքի Chat-ով
- » Ուղարկել էլեկտրոնային հաղորդագրություն՝ info@ingoarmenia.am էլեկտրոնային հասցեին: